ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի ՝ 2026 թվականի նիստի

ք. Եղեգնաձոր **10 հուլիսի 2026թ.**

ժամը՝ 11:00

Մարզխորհրդի նիստը նախագահում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Վասիլ Ասլանյանը:

Քարտուղարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Էլյա Սարգսյանը:

Մարզխորհրդի նիստին մասնակցում են

- ՀՀ Վայոց ձորի համայնքների ղեկավարներ
- ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդականները
- ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատակիցներ
- Բուժհաստատությունների տնօրեններ
- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Վայոց ձորի մարզային կենտրոնի, ՀՀ բնապահպանական եվ ընդերքի տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնի, ՀՀ քաղաքաշինության, հրդեհային եվ տեխնիկական անվտանգության տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնի պետերը
- Եղեգնաձորի ՋՕԸ տնօրենի տեղակալը

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Վասիլ Ասլանյանը ողջունեց ներկաներին, ապա նիստի օրակարգի հաստատումից հետո ձայնը փոխանցեց զեկուցողներին:

Օրակարգում՝

1.ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կողմից 2026 թվականի առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների մասին.

Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Արգամ Մարգարյան

2. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից 2026 թվականի առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների մասին.

Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Արթուր Ղազարյան

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի կողմից 2026 թվականի առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների մասին.

Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Արամ Կոստանյան

4. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության կողմից 2026 թվականի առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների մասին.

Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Գեղամ Մարգարյան

5. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից 2026 թվականի առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների մասին.

Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սուրեն Միրզոյան

6. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության կողմից 2026 թվականի առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների մասին.

Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության պետ, փորձագետ Գվիտոն Դավթյան

Հայտարարություններ

1.ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստման աշխատանքների կազմակերպման մասին.

2. ՀՀ Վայոց ձորի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման աշխատանքների կազմակերպման մասին.

Հայտարարությունը ներկայացնող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետի տեղակալ Գրիգոր Բաբաջանյան

Օրակարգի առաջին հարցի շուրջ զեկուցեց Արգամ Մարգարյանը՝ ներկայացնելով ոլորտում կատարված և ընթացքի մեջ գտնվող մի շարք աշխատանքներ, մասնավորապես՝ մարզում տարբեր գերատեսչական մարմինների պատվիրատվությամբ կատարվող շինարարական աշխատանքների ընթացքը, նախահաշվային արժեքները,առկա խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ կատարված քայլերը:

Վայոց ձորի մարզում ներկա պահին կառուցվում են հետևյալ դպրոցները.

- ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվիրատվությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ԾԻԳ-ի կողմից կառուցվում է Չիվայի միջնակարգ դպրոցը, Կապալառու կազմակերպություն՝ «Բիդեք» ՍՊԸ: Նախահաշվային արժեքը կազմում է 799 միլիոն 733 հազար ՀՀ դրամ:

ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ կառուցվում է՝

- Գետափի միջնակարգ դպրոց: Կապալառու կազմակերպություն՝ «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ և «Էն շին» ՍՊԸ ՀԳ: Նախահաշվային արժեքը կազմում է՝ 2 միլիարդ 616 միլիոն 67 հազար ՀՀ դրամ:
- Արենիի միջնակարգ դպրոց: Կապալառու կազմակերպություն՝ «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ: Նախահաշվային արժեքը կազմում է՝ 2 միլիարդ 245 միլիոն 13 հազար ՀՀ դրամ,
- Արփիի կրթահամալիր: Կապալառու կազմակերպություն՝ «Մավշին» ՍՊԸ: Նախահաշվային արժեքը կազմում է՝ 1 միլիարդ 896 միլիոն 470 հազար ՀՀ դրամ,
- Քարագլխի կրթահամալիր: Կապալառու կազմակերպություն՝ «Բիդեք» ՍՊԸ: Նախահաշվային արժեքը կազմում է ՝ 1 միլիարդ 562 միլիոն 989 հազար ՀՀ դրամ,
- Մարտիրոսի կրթահամալիր: Կապալառու կազմակերպություն՝ «Մավշին» ՍՊԸ Նախահաշվային արժեքը կազմում է՝ 1 միլիարդ 910 միլիոն 255 հազար ՀՀ դրամ,

Կառուցվող դպրոցների նախահաշվային ընդհանուր արժեքը կազմում է 11 միլիարդ 30 միլիոն 527 հազար ՀՀ դրամ:

ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ վերանորոգվում/վերանորոգվել են

- Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց: Կապալառու կազմակերպություն՝ «Արման և Վահե Կոստանյաններ» ՍՊԸ: Նախահաշվային արժեքը կազմում է՝ 413 միլիոն 740 հազար ՀՀ դրամ: Շինարարական աշխատանքներն ավարտված են:
- Մալիշկայի Մ.Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց: Կապալառու կազմակերպություն՝ «Արման Շին» ՍՊԸ, Նախահաշվային արժեքը կազմում է՝ 360 միլիոն 477 հազար ՀՀ դրամ: Շինարարական աշխատանքներն ավարտված են:
- Վայքի ավագ դպրոց: Կապալառու կազմակերպություն՝ «Արման և Վահե Կոստանյաններ» ՍՊԸ: Նախահաշվային արժեքը կազմում է՝ 382 միլիոն 80 հազար ՀՀ դրամ,
- Ռինդի միջնակարգ դպրոց: Կապալառու կազմակերպություն՝ «Արման Շին» ՍՊԸ, Նախահաշվային արժեքը կազմում է՝ 449 միլիոն 880 հազար ՀՀ դրամ: Շինարարական աշխատանքներն ավարտված են:
- Գլաձորի միջնակարգ դպրոց: Կապալառու կազմակերպություն՝ «Վրեժ» ՍՊԸ, Նախահաշվային արժեքը կազմում է՝ 501 միլիոն 306 հազար ՀՀ դրամ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:
- Ջառիթափի Ա. Մելիքյանի անվան միջնակարգ դպրոց: Կապալառու կազմակերպություն՝ «Մավշին» ՍՊԸ: Նախահաշվային արժեքը կազմում է՝ 368 միլիոն 640 հազար ՀՀ դրամ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:
- Խնձորուտի միջնակարգ դպրոց: Կապալառու կազմակերպություն՝ «Մարկո Գրուպ» ՍՊԸ, Նախահաշվային արժեքը՝ 319 միլիոն ՀՀ դրամ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ վերանորոգվում է

- Շատինի միջնակարգ դպրոց: Կապալառու կազմակերպություն՝ «Ալ-մասկա» ՍՊԸ, Նախահաշվային արժեքը՝ 288 միլիոն ՀՀ դրամ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Վերանորոգվող դպրոցների նախահաշվային ընդհանուր արժեքը կազմում է 3 միլիարդ 83 միլիոն 123 հազար ՀՀ դրամ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ վերանորոգվում են

- Աղավնաձորի մանկապարտեզի շենքը: Կապալառու կազմակերպություն՝ «ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ» ՍՊԸ, նախահաշվային արժեքը կազմում է 180 միլիոն ՀՀ դրամ:
- Վայքի թիվ 1 մանկապարտեզ: Կապալառու կազմակերպություն՝ «Սատանի կամուրջ» ՍՊԸ ՀԳ կոնսեսիում: Պայմանագրային արժեքը կազմում է 138 միլիոն 894,4 հազար ՀՀ դրամ:
- Վայքի թիվ 3 մանկապարտեզ: Կապալառու կազմակերպություն՝ «Արման և Վահե» ՍՊԸ: Պայմանագրային արժեքը կազմում է 259 միլիոն 425 հազար ՀՀ դրամ:

Վերանորոգվող մանկապարտեզների պայմանագրային ընդհանուր արժեքը կազմում է 578 միլիոն 319,4 հազար ՀՀ դրամ:

- **Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ հրատապ ծրագրի շրջանակներում վերանորոգվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի վարչական շենքը:** Կապալառու կազմակերպություն՝ «Մավշին» ՍՊԸ, պայմանագրային արժեքը կազմում է 45 միլիոն ՀՀ դրամ:

Ճանապարհաշինություն

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ իրականացվում է՝ S-9-10,/Մ-2/-Ջեղեա /6,5կմ ճանապարհի ընդհանուր երկարությունը/ մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ6+500, /6,5կմ/ հատվածի հիմնանորոգման աշխատանքներ: Ընթացակարգը գտնվում է մրցութային փուլում:
2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ՝ Մ-2, Երևան-Երասխ-Նորավան-Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման (նախկին՝ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ134+600 - կմ139+000 հատվածի հիմնանորոգում: Կապալառու կազմակերպություն՝ <<Վայքի ՃՇՇ>> ՓԲԸ /Ծրագրի սկիզբ՝ 01.07.2026թ., ավարտ՝ 26.02.2027թ./: Պայմանագրային արժեքը՝ 1.000.043.400 (մեկ միլիարդ քառասուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ: Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են: Կատարված է աշխատանքների 15%:
3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ՝ Հ-48,/Մ-2/ - Վերնաշեն - Գլաձորի պատմական հուշարձան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000- կմ 15+500 հատվածի հիմնանորոգում: Գտնվում է նախագծման փուլում:
4. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ՝ Հ-79 /Մ-10/- Գեղհովիտ-Քարագլուխ-/Մ-2/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 28+590 - կմ 38+866 հատվածի հիմնանորոգում: Գտնվում է նախագծման փուլում:
5. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ՝ S-9-24 /S-9-21/(Հերմոն)– Վարդահովիտ - Գետիկվանք տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000– կմ6+300 հատվածի և 0.2 կմ իջատեղի հիմնանորոգում: Գտնվում է նախագծման փուլում:

6. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ կառուցվում է՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնքից դեպի Կարմրաշեն <<Ալպյան>> մարգագետիններ տանող գրունտային ճանապարհի կառուցում:Նախահաշվային արժեքը՝ 281,830,759 (երկու հարյուր ութսունմեկ միլիոն ութ հարյուր երեսուն հազար յոթ հարյուր հիսունինը) ՀՀ դրամ: Շինարարության մրցույթը կայացել է: Մրցույթի ընթացակարգը գտնվում է անգործության փուլում:
7. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ իրականացում է՝ S-9-23, /S-9-21/ - Արտաբույնք- Հորբատեղ մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհի 3,1կմ հատվածի փլուզված հողային պաստառի (L=35մ, D=2մ, H=10մ) վերականգնում: Գտնվում է նախագծման փուլում: Նախագծման աշխատանքներ իրականացնող <<Ճանապհագիծ ինստիտուտ>> ՍՊԸ:
8. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ իրականացվում է՝ ՀՀ Վայոց ձոր մարզի S-9-7 - /Մ-2/-Մոզրով -/S-9-40/ ճանապարհի վրա գտնվող կամրջի վերանորոգման աշխատանքներ: Պայմանագիրը կնքված է: Կապալառու կազմակերպություն՝ /ԱՏ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ/, պայամանագրային արժեքը՝ 71,400,240 (յոթանասունմեկ միլիոն չորս հարյուր հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ:
9. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ իրականացվում է՝ ՀՀ Վայոց ձոր մարզի S-9-36 - /Մ-2/-Արտավան ճանապարհի վրա գտնվող կամրջի վերակառուցման աշխատանքներ (նոր կամրջի կառուցում): Նախահաշվային արժեքը՝ 137,481,200 (հարյուր երեսունյոթ միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ: Մրցույթի ընթացակարգը գտնվում է անգործության փուլում:
10. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ հիմնանորոգվում է՝ S-9-31, /Հ-42/ (Ջառիթափ)-Գոմք-Կապույտ մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհի կմ0+600-կմ8+400 /7,8կմ/ հատվածի հիմնանորոգման աշխատանքներ: Հիմնանորոգվում է ՏԿԵՆ-ի կողմից: /Ծրագրի սկիզբ՝ 15.12.2025թ., ավարտ՝ 26.12.2026թ./: Պայմանագրային արժեքը՝ 1.146.000.000 (մեկ միլիարդ հարյուր քառասունվեց միլիոն) ՀՀ դրամ : Կապալառու կազմակերպություն՝ /ԱԱԲ ՊՐՈՅԵԿՏ ՍՊԸ/: Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են: Կատարված է աշխատանքների 40%:

Կլաստերային դպրոցների ճանապարհների հիմնանորոգման մասին

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ՝ «ՀՀ Վայոց ձորի մարզի Գոմքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

բակից մինչև բնակավայրի կենտրոն ընկած ճանապարհահատվածը ներառված է S-9-31, /Հ-42/ (Ջառիթափ)-Գոմք-Կապույտ մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհի կմ0+600-կմ8+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ծրագրում:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ հիմնանորոգվում է՝ «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 300 մ երկարությամբ հատվածը:

ՏԿԵՆ-ի կողմից կազմակերպվել է Հ-48,/Մ-2/ - Վերնաշեն - Գլաձորի պատմական հուշարձան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000- կմ15+500 հատվածի

հիմնանորոգման նախագծի ձեռքբերման գործընթաց, որի շրջանակում կիրականացվի նաև 300 մ երկարությամբ հատվածը: Նախագծման աշխատանքներն ընթացքի մեջ են:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ հիմնանորոգվում է՝ «ՀՀ Վայոց ձորի մարզի Չիվայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի բակից մինչև բնակավայրի կենտրոն ընկած ճանապարհահատվածը: Նախահաշվային արժեքը՝ 339,137,044 (երեք հարյուր երեսունինը միլիոն հարյուր երեսունյոթ հազար քառասունչորս)ՀՀ դրամ: Մրցույթի ընթացակարգը գտնվում է անգործության փուլում:

Առաջարկվել է՝

1. Ընթացիկ մշտադիտարկումներ կատարել գերատեսչական մարմինների պատվիրատվությամբ կատարվող շինարարական աշխատանքների /հատկապես որակի և ժամկետների պահպանման/ նկատմամբ:

2. ՀՀ պետական բյուջեի միջոցներով ճանապարհաշինության ոլորտում նախատեսված աշխատանքների պատշաճ կատարման նկատմամբ ցուցաբերել հետևողական մոտեցում, կատարել պարբերական դիտարկումներ, ներկայացնել արդյունքներ:

3. Մշտական ուշադրության կենտրոնում պահել կրաուերային դպրոցների ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ընթացքի և որակի հարցերը:

Օրակարգի երկրորդ հարցի շուրջ զեկուցեց Արթուր Ղազարյանը՝ ներկայացնելով առողջապահության և սոցիալական ոլորտում կատարված և ընթացքի մեջ գտնվող մի շարք աշխատանքներ, մասնավորապես՝ մարզային ենթակայության բուժհաստատությունների ընթացիկ աշխատանքները, առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ընթացիկ աշխատանքները և համեմատական ցուցանիշները, բուժհաստատությունների վերազինման հեռանկարները: Զեկուցողն անդրադարձավ նաև սոցիալական, ընտանիքի, կանանց երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտներում կատարված աշխատանքներին:

Առողջապահության ոլորտ

2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Առողջապահության և սոցիալական ոլորտի վարչությունն իր գործունեությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, կառավարության որոշումների, ոլորտային ռազմավարությունների և մարզպետի հանձնարարականների շրջանակներում:

Վարչության առաջնահերթ նպատակը եղել է մարզի բնակչությանը մատուցվող առողջապահական և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարձրացումը, պետական ծրագրերի պատշաճ իրականացումը և շահառուների իրավունքների պաշտպանությունը:

Հաշվետու ժամանակահատվածում համակարգվել և վերահսկվել է մարզի բժշկական կազմակերպությունների գործունեությունը, ապահովվել համագործակցությունը բուժհաստատությունների ղեկավարների, համայնքների և ոլորտային այլ կառույցների հետ: Իրականացվել են աշխատանքային այցելություններ, խորհրդակցություններ և քննարկումներ՝ առողջապահական ծառայությունների մատչելիության, որակի և կազմակերպման հետ կապված խնդիրների բացահայտման և լուծման նպատակով:

Մարզային ենթակայության 2 բժշկական հաստատություն՝ «Եղեգնաձորի պոլիկլինիկա» ՓԲԸ-ն և «Վայքի պոլիկլինիկա» ՓԲԸ-ն մատուցում են միայն արտահիվանդանոցային

ծառայություններ: Պոլիկլինիկաներն ունեն **258** աշխատակից, որից՝ **53** բժիշկ և **135** բուժքույր, առկա են թափուր հաստիքներ:

2026թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում բուժհաստատություններում իրականացվել է **45մլն 972հազ** դրամի վճարովի ծառայություններ 2025թ. նույն ժամանակահատվածում **45մլն 308հազ** / աճը **664** հազար/:

2026թ. հունվարի 1-ից գործում է առողջության համընդհանուր ապահովության համակարգը, որի արդյունքում զգալի աճել է հաճախումների թիվը՝ 2025թ. առաջին կիսամյակում **49793** այց, 2026թ. առաջին կիսամյակում **92004** այց / աճը 1,8 անգամ/:

Լաբորատոր գործիքային հետազոտությունների թիվը 2025թ. առաջին կիսամյակում կազմել է **75718**, իսկ 2026թ. առաջին կիսամյակում **94728** /աճը 1,2անգամ/:

Շտապ օգնության կանչերի թիվը 2025թ. կազմել է **5293,** որից՝ **75** տեղափոխում Երևանի տարբեր բշժկական կենտրոններ, 2026թ. նույն ժամանակահատվածում՝ **4631** կանչ, **88** տեղափոխում մայրաքաղաքի բժշկական կենտրոններ: Եղեգնաձորի պոլիկլինիկայում գործող ակնաբուժական կենտրոնում 2026թ. առաջին կիսամյակում իրականացվել է **189** վիրահատություն, 2025թ. նույն ժամանակահատվածում՝ **94** վիրահատություն /աճը մոտ 2 անգամ/:

Կարևորում ենք նաև պատվաստումային գործընթացը, որն իրականացվում է՝ համաձայն պատվաստումային օրացույցի: **2026թ.** վեց ամիսներին մարզի պատվաստումների ընդգրկվածության ցուցանիշը կազմում Է **95-96** տոկոս:

Պետական պատվերով բուժման, հետազոտության, դեղապահովման նպատակով **10** քաղաքացու համար միջնորդագրեր են ներկայացվել Առողջապահության նախարարություն, 9-ը ստացել է դրական պատասխան, **1**-ն ընթացքի մեջ է: Առողջարանային վերականգնողական բուժման Ջերմուկի «Արարատ» մոր և մանկան առողջարան է ուղեգրվել **20** երեխա, իսկ Ապարանի վերականգնողական-առողջարանային կենտրոն՝ **2-ը**:

ՀՀ կառավարության **2026թ. 309-Ն** որոշմամբ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում /բուժական գործ/ մասնագիտությամբ սահմանված **47** նպատակային ուսուցման տեղերից **5**-ը տրամադրվել է մեր մարզին: **2025-2026թթ..** ընդունելության քննություններին մասնակցելու համար **10** քաղաքացու հատկացրել ենք տեղեկանքներ:

Իրականացվել և իրականացվում է կետրոնացված և մարդասիրական խողովակներով հատկացված դեղորայքով և բժշկական պարագաներով ապահովման գործընթացը, վերապատրաստման օնլայն և առկա կրեդիտավորման դասընթացներ՝ ավագ և միջին բուժաշխատողների, նեղ մասնագետների համար:Եղեգնաձորի պոլիկլինիկայի միջոցներով ձեռք է բերվել «Ֆիլիպս» մակնիշի համակարգչային շերտագրման սարք, ամբողջովին թարմացվել է կոշտ և փափուկ գույքը, ձեռք են բերվել ֆիզիոթերապևտիկ սարքավորումներ /էլեկտրոֆորեզ, ֆոնոֆորեզ, հարվածային ալիք/ վերանորոգվել և հարմարեցվել են տարածքներ՝ «Դենտալ» համակարգչային շերտագրման ստոմ. սարքի և մամոգրաֆ սարքի տեղակայման համար: Ձեռք է բերվել անհրաժեշտ քանակությամբ համակարգչային տեխնիկա: 2026թ –ին ընդհանուր ապահովագրության ներդրումից հետո Եղեգնաձորի պոլիկլինիկայում աշխատավարձի բարձրացումը կազմել է **40** տոկոս /1,4անգամ/, Վայքի պոլիկլինիկայում՝ **13** տոկոս:

Սոցիալական պաշտպանության ոլորտ

Շարունակվել է համագործակցությունը համայնքների ՄՄԾ-ի տարածքային կենտրոնների և ոլորտային այլ կառույցների, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ: Աշխատանքներ են իրականացվել պետական սոցիալական աջակցության /Ղարաբաղից տեղահանվածների, զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման, տարեցների և հաշմանդանություն ունեցող անձանց ծրագրերի կազմակերպման ուղղությամբ:

Վարչությունն աջակցել է սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների և խոցելի այլ խմբերի հիմնախնդիրների լուծմանը: Հաշվետու ժամանակահատվածում քննարկվել են քաղաքացիների դիմումները, առաջարկությունները և բողոքները, որոնց մեծ մասին տրվել են սպառիչ պարզաբանումներ, կամ իրականացվել են համապատասխան ընթացակարգեր՝ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: 2026թ. առաջին կիսամյակին քաղաքացիներից ստացվել է **116** դիմում, հունվար ամսին դրամական օգնություն է տրամադրվել **36** քաղաքացու /**1 510 000**դ /, **80** դիմումատուի տրվել են համապատասխան պատասխաններ:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

Իրականացվել է համագործակցություն ՆԳՆ համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Եղեգնաձորի, Վայքի և Ջերմուկի բաժինների հետ, կատարվել են այցելություններ բռնության գործով հաշվառվածներին, բռնության ենթարկված անձանց, ինչպես նաև հաշվառման մեջ գտնվող իրավախախտ անչափահասների ընտանիքներ՝ հաշտության վերականգնման և կանխարգելիչ աշխատանք իրականացնելու նպատակով:

2026թ. հուլիսի 1-ի դրությամբ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում հաշվառված է **12** անչափահաս իրավախախտ, բռնություն գործադրած **24** անձ և երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող **6** ծնող, Վայքի բաժնում՝ բռնության դեպքով **4** անձ և **8** անձ՝ Ջերմուկի բաժնում:Խնամակալության և հոգաբարձության մարմինների, ոստիկանության և կրթական հաստատությունների հետ համատեղ աշխատանք է տարվել կրթությունից դուրս մնացած **1** և ռիսկի գոտում հայտնված **11** երեխաների և նրանց ընտանիքների հետ՝ հանրակրթություն վերադարձնելու նպատակով:

Իրականացվել է որդեգրման **1** գործընթաց, որդեգրված երեխան «Երևանի մանկան տուն» ՊՈԱԿ-ից տեղափոխվել է որդեգրողի ընտանիք:Կատարվել են խնամատար ծնող դառնալ ցանկացող **3** անձի հաշվառմանն ուղղված աշխատանքներ, ամենամսյա այցելություն խնամատար ընտանիք՝ հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով: «Մանուկ» ենթահամակարգ է մուտքագրվել կյանքի դժվար իրավիճակում գտնվող **67** երեխայի վերաբերյալ տվյալներ:

Մարզպետի աշխատակազմի և համապատասխան կառույցների համագործակցությամբ՝ մարզի զոհված, հաշմանդամություն ունեցող զինծառայողների, աշխարհազորայինների, ծնողազուրկ, անապահով և բազմազավակ ընտանիքների **7-13** տարեկան դպրոցահասակ **120** երեխա ամառային հանգիստն անցկացրել է ՀՀ Կոտայքի մարզի «Հասմիկ» առողջարանական ճամբարում:

Առաջարկվել է՝

1. Առողջապահական և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարելավման նպատակով կատարել պարբերական դիտարկումներ, վերլուծություններ, ցուցանիշների համեմատություն:

2.Պետական ծրագրերի պատշաճ կատարման և շահառուների իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով ավելի սերտացնել փոխգործակցությունը բժշկական և սոցիալական ծառայություններ տրամադրող հաստատությունների հետ:

3. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող գործողություններում ամրապնդել համագործակցությունը պատասխանատու բոլոր օղակների հետ, ներգրավել պատկան կառույցների ներկայացուցիչներին:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացրել է Արամ Կոստանյանը՝ անդրադառնալով հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից իրականացված լայնածավալ աշխատանքներին՝ ուղղված մարզի սոցիալ-փնտրեսական առաջընթացի ապահովմանը և գործառութային առանձնահատկություններից բխող ռազմավարական ծրագրերի իրագործմանը, ինչպես նաև սուբվենցիոն ծրագրերի ընթացքին, առկա խնդիրներին, ակնկալվող վերջնարդյունքներին:

1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Բաժնի գործունեության առանցքում է գտնվել մարզի զարգացման ծրագրերի՝ գիտականորեն հիմնավորված մշակումը.

- **Ծրագրային ապահովում.** Կազմակերպվել են մարզի ընթացիկ և հեռանկարային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, նախագծերի քննարկման և անհրաժեշտ փաստաթղթային հենքի պատրաստման աշխատանքները:
- **Տնտեսական մշտադիտարկում.** Իրականացվել է տնտեսական վիճակի համապարփակ վերլուծություն, ծրագրերի կատարման ընթացքի և արդյունքների գնահատում:
- **Համագործակցային հարթակ.** Ապահովվել է ակտիվ փոխգործակցություն տնտեսվարողների, ոլորտային նախարարությունների, գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների միջև:
- Տարբեր ձևաչափերով և ոլորտային ուղղություններով պարբերաբար կազմվել են ընթացիկ հաշվետվություններ:

2. ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՋԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԹԻՐԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ջբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման նպատակով ապահովել է բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության ակտիվ ու արդյունավետ համագործակցությունը, որն էլ նպաստել է զբոսաշրջիկների թվի աճին:

Մարզում զբոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով բաժինը մասնակցել է տարաբնույթ ներդրումային ծրագրերի կազմման և մշակման աշխատանքներին:

Զբոսաշրջության բնագավառում իրականացվել է բազմաշերտ քաղաքականություն՝ ուղղված մարզի ներուժի իրացմանը.

- **Կլաստերային քաղաքականություն.** Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել ՀՀ-ում մշակված զբոսաշրջային 10 կլաստերների հիմնավորման գործընթացին, որի արդյունքում **դրանցից 3-ն իրականացվում են մարզում**: ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Զբոսաշրջության կոմիտեի հետ համատեղ կազմակերպվել են հանրային քննարկումներ՝ ներկայացնելով իրականացվող և նախատեսվող աշխատանքները:
- **Ռեսուրսների գույքագրում և հանրայնացում.** Աշխատանքներ են տարվել մարզի շուրջ 1400 պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների, բնական տեսարժան վայրերի և էկոլոգիապես մաքուր մթերքների արտադրության ճանաչելիության բարձրացման ուղղությամբ: Պարբերական մշտադիտարկումների ընթացքում իրականացվել է լուսանկարահանում և խնդիրների վերհանում:
- **Վիճակագրական պատկեր (2025-2026 թթ.).** Մարզում առկա է **107 հյուրանոցային տնտեսության օբյեկտ**: Բաշխվածությունն ըստ համայնքների.

    - **Ջերմուկ՝** 18 օբյեկտ (6 առողջարան, 2 հյուրանոց-առողջարան, 1 պանսիոն, 7 հյուրանոց, 2 հյուրատուն)
    - **Վայք՝** 16 օբյեկտ (2 հյուրանոց, 14 հյուրատուն)
    - **Եղեգնաձոր՝** 25 օբյեկտ (22 հյուրատուն, 1 վրանային հյուրատուն, 2 հյուրանոց)
    - **Եղեգիս՝** 18 օբյեկտ (15 հյուրատուն, 3 հյուրանոց)
    - **Արենի՝** 30 հյուրատուն

3. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԽՈՐԱՑՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արտաքին կապերի զարգացման արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ գործնական փոխշահավետ կապերի ստեղծման ուղղությամբ պարբերաբար իրականացվել են աշխատանքները:

Մշտական ուշադրության կենտրոնում է գտնվել բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը: Վայոց ձորի մարզը մշտապես կարևորում է սփյուռքահայերի, սփյուռքի կառույցների և հատկապես գործընկեր մարզերում հայկական համայնքների հետ աշխատանքի դերը ինչպես Հայաստան-Սփյուռք գործակցության, այնպես միջտարածաշրջանային համագործակցության ամրապնդման և զարգացման գործում, որի արդյունքում ամուր կապեր են հաստատվել արտասահմանում գտնվող հայ համայնքների և կառույցների հետ:ՀՀ Վարչապետի մոտ կայացած խորհրդակցության արձանագրության կետերի վերաբերյալ հանձնարարականները ներկայացվել է մարզի համայնքներին և ընթացքի մասին տեղեկատվությունը տրամադրել ՀՀ ՏԿԵՆ:Հավաքագրվել և ՀՀ ՏԿԵՆ է ներկայացվել մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների վաճառքի արգելքն իրականացնելու ուղղությամբ ՏԻՄ-երի կողմից տարվող վերահսկողության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն:

4. ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Բաժինը շարունակական աշխատանքներ է իրականացրել սուբվենցիոն ծրագրերի իրականացման, ֆինանսավորման և կատարողականի վերլուծության ուղղությամբ: Պարբերաբար աշխատանքներ են կատարվել սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում պահանջվող տեղեկատվության հավաքագրման ուղղությամբ:

4.1 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ, 2026 ԹՎԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

2026 թվական է տեղափոխվել 2024 թվականին հաստատված 2 ենթածրագիր՝ Արենի համայնքի **«Գնիշիկ բնակավայրում «Կարմիր քար» ջրագծի մասնակի նորոգում» և «Կեչուտ գյուղի բակային տարածքի աստիճանների և հենապատի կառուցում» ենթածրագրերը:**

1. «Կեչուտ գյուղի բակային տարածքի աստիճանների և հենապատի կառուցում» ենթածրագիր

- Ենթածրագրի ընդհանուր գումարը՝ 8 **մլն 33 հազ 362 ՀՀ դրամ:**
- Ենթածրագրի սկիզբ՝ **06.05.2025թ.,**
- Ենթածրագրի ավարտ՝ **19.08.2025**/ՀՀ կառավարության որոշմամբ՝ մինչև 2025թ. նոյեմբերի 1/,
- Ենթածրագրի վերջնարդյունք՝ Կեչուտ գյուղում կունենանք 1 նոր աստիճան՝ 60 մետր երկարությամբ ասֆալտապատ ճեմուղով և վերականգնված 100մ հենապատով,
- Ենթածրագիրը տեղափոխվել է 2026 թվական, քանի որ սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել էր նախորդ տարվա ավարտին (2024 թ.-ի սեպտեմբերի 26):

Կատարվել է աշխատանքների 95%-ը: Կատարվել են հողային, բետոնե հենապատերի կառուցման աշխատանքներ:

2. «Գնիշիկ բնակավայրում «Կարմիր քար» ջրագծի մասնակի նորոգում» ենթածրագիր

- Ենթածրագրի ընդհանուր գումարը՝ **4 մլն 404 հազ 400 ՀՀ դրամ,**
- Ենթածրագրի սկիզբ՝ **06.06.2024թ.,**
- Ենթածրագրի ավարտ՝ **30.12.2024թ.** /ՀՀ կառավարության որոշմամբ՝ մինչև 2025թ. նոյեմբերի 1/,
- Ենթածրագրի վերջնարդյունք՝ կունենանք 1 աղբյուրակապ,42 մ ջրագիծ և 70մ ճանապարհ:
- Շինարարի՝ լիցենզիա չունենալու պատճառով ենթածրագիրը տեղափոխվել է 2025 թվական:
- Գնիշիկ բնակավայրի «Խազազի ձոր-Կարմիր քար» ջրագծի կառուցման աշխատանքների մրցույթը կայացել է 23.03.2026թ.,պայմանագրի կնքման փուլ

4.2 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ, 2026 ԹՎԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

2025 թվականին հավանության արժանացած 11 ծրագրից 2026 թվական տեղափոխվել են հետևյալ ծրագրերը (ենթածրագրերը)

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ՝ 2 ծրագիր

1. **ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի թիվ 2 և թիվ 5 մանկապարտեզների բակերի բարեկարգում**

- Թիվ 2 մանկապարտեզ՝ կատարվել է աշխատանքների 90 տոկոսը: 07.07.2026թ. ներկայացվել է ՀՀ ՏԿԵՆ՝ մասնակի ֆինանսավորում ստանալու նպատակով:
- Թիվ 5 մանկապարտեզ՝ կատարվել է աշխատանքների 70 տոկոսը: 07.07.2026թ. ներկայացվել է ՀՀ ՏԿԵՆ՝ մասնակի ֆինանսավորում ստանալու նպատակով:

2. **Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր, Մալիշկա, Գետափ, Գլաձոր և Վերնաշեն բնակավայրերի ոռոգման ցանցի վերակառուցում**
   - Կատարվել է աշխատանքների 80 տոկոսը: 01.07.2026թ. ներկայացվել է ՀՀ ՏԿԵՆ՝ մասնակի ֆինանսավորում ստանալու նպատակով:

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔ՝ 1 ծրագիր

1. **«Վայք համայնքի Գոմք, Ջառիթափ, Արտավան, Սարավան, Ազատեկ, Արին, Փոռ, Ջեղեա, Հերհեր բնակավայրերի փողոցների և Վայք քաղաքի Իսրայել Օրի փողոցի ասֆալտապատում» ծրագիր՝**

- Ջառիթափ, Ազատեկ և Փոռ բնակավայրերում ասֆալտապատման աշխատանքներն ավարտվել են: Արտավան բնակավայրում ասֆալտապատման աշխատանքները շարունակվում են: Արին, Ջեղեա, Հերհեր,Սարավան և Գոմք բնակավայրերում շարունակվում են հողային աշխատանքները: Կատարվել է աշխատանքների 38 տոկոսը:

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ՝ 1 ծրագրի 3 ենթածրագիր

1. **«Արենի համայնքի Արենի բնակավայրի խմելու ջրի ֆիլտրող կառուցվածքի կառուցում, Արփի բնակավայրում «Ջրովանքի ձոր» տարածքում խմելու ջրագծի արտաքին ցանցի 500գծմ հատվածի հիմնանորոգում, Ելփին բնակավայրում խմելու ջրի ՕԿՋ-ի և ներքին ցանցի կառուցում, Չիվա բնակավայրում խմելու ջրի ՕԿՋ-ի և ներքին ցանցի կառուցում» ծրագիր՝**

1.1 **«Արենի համայնքի Արենի բնակավայրում խմելու ջրի ֆիլտրող կառուցվածքի կառուցում» ենթածրագիր**

- Ներկա պահին կատարվել են հողային, կայանի հիմքերի կառուցման աշխատանքներ:Կատարվել է աշխատանքների 55 %-ը:

1.2 **«Ելփին բնակավայրում խմելու ջրի ՕԿՋ-ի և ներքին ցանցի կառուցում» ենթածրագիր**

- Ներկա պահին կատարվել են հողային աշխատանքներ, խողովակների գնման, մոնտաժման, ՕԿՋ-ների հիմքերի կառուցման աշխատանքներ: Կատարվել է աշխատանքների 55 %-ը:

1.3 **«Չիվա բնակավայրում խմելու ջրի ՕԿՋ-ի և ներքին ցանցի կառուցում» ենթածրագիր**

- Ներկա պահին կատարվել են հողային աշխատանքներ, խողովակների գնման, մոնտաժման, ՕԿՋ-ների հիմքերի կառուցման աշխատանքներ: Կատարվել է աշխատանքների 55 %-ը:

1. «Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի խմելու ջրագծի կառուցում» ծրագիր

- Ներկա պահին շինարարական աշխատանքները դեռ չեն սկսվել:

2. «Եղեգիս համայնքի Քարագլուխ, Արտաբույնք, Գողթանիկ, Սալլի, Աղնջաձոր, Հորբատեղ, Հորս և Թառաթումբ բնակավայրերի ոռոգման առուների կառուցում» ծրագիր

- 1-ին և 2-րդ ենթածրագրերն ավարտված են, պետության մասնաբաժինը տրամադրված է, իսկ 3-րդ ենթածրագրի շրջանակներում կատարվել է աշխատանքների ՝ 95 տոկոսը:

4.3 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

2026 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի 20 ամբողջական փաթեթ՝ **5 մլրդ 393 մլն 745 հազ 985 ՀՀ դրամ** արժողությամբ, **որից 2 մլրդ 479 մլն 232 հազ 125 ՀՀ դրամ կամ 45,96 %-ը համայնքների ներդրումն է, 2 մլրդ 914 մլն 513 հազ 860 ՀՀ դրամը կամ 54,04 % -ը՝ սուբվենցիայի գումարն է:**

Ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 20 ծրագրից հաստատվել է **10 ծրագիր**: Համայնքներին առաջարկվել է 2026 թվականին իրենց կողմից ներկայացված և սուբվենցիայի ծրագրերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի նիստերում չքննարկված փաթեթները լրամշակել և ներկայացնել որպես 2027 թվականի սուբվենցիոն ծրագրեր՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 16.11.2006թ. թիվ 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, միաժամանակ հաշվի առնելով նաև ծրագրերի իրականացման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Եղեգնաձոր համայնք՝ 3 ծրագիր՝ 628 մլն ՀՀ դրամ արժողությամբ.

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Միկոյան փողոցի ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ,
2. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա, Գետափ, Գլաձոր և Վերնաշեն բնակավայրերի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցերի կառուցում,
3. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Շահումյան և Բաղրամյան փողոցների բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքներ:

Հաստատվել է 1 ծրագիր՝

- ***Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Միկոյան փողոցի ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ /193 950 170 ՀՀ դրամ***

Արենի համայնք՝ 9 ծրագիր՝ 2 մլրդ 438 մլն ՀՀ դրամ արժողությամբ:

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի չլուսավորված փողոցների արտաքին լուսավորման համակարգերի կառուցում, Արենի բնակավայրի չլուսավորված փողոցների արտաքին լուսավորման համակարգերի կառուցում, Խաչիկ բնակավայրի չլուսավորված փողոցների արտաքին լուսավորման համակարգերի կառուցում, Ռինդ բնակավայրի չլուսավորված փողոցների արտաքին լուսավորման համակարգերի կառուցում,
2. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրում խմելու ջրի 1.3 կմ ներքին ցանցի կառուցում, Գնիշիկ բնակավայրում խմելու ջրի ներքին ցանցի կառուցում, Խաչիկ բնակավայրում «Մկնակտրեկ» ջրաղբյուրի արտաքին ցանցի կառուցում,
3. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում 3.0 կմ ներքին ցանցերի կառուցում, Չիվա բնակավայրի 1950 գծմ ոռոգման ներքին ցանցի մասնակի կառուցում,

4. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի կենտրոնական ճանապարհի ճանապարհամերձ տարածքում 450 գծմ ներքին ցանցի կառուցում, Արենի բնակավայրի «Տապ» հանդամասում 2.36 կմ ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում, Արենի բնակավայրի 1-ին փողոցում 500 գծմ ներքին ցանցի կառուցում, Գնիշիկ բնակավայրի ոռոգման ջրի 1 կմ երկարությամբ D=610մմ պոլիէթիլենային և պողպատե խողովակներով ջրագծի, ինչպես նաև ճանապարհի կառուցում, Ռինդ բնակավայրում ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում,
5. Արենի համայնքի Արփի բնակավայրում դեպի գերեզմանոց տանող ճանապարհի տուֆ քարով սալապատում,Չիվա բնակավայրում դեպի գերեզմանոց տանող ճանապարհի տուֆ քարով սալապատում,
6. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրում ֆուտբոլի դաշտի կառուցում, Արենի բնակավայրում ֆուտբոլի դաշտի կառուցում, Արփի բնակավայրում ֆուտբոլի դաշտի կառուցում, Չիվա բնակավայրում ֆուտբոլի դաշտի կառուցում,
7. Արենի համայնքի Արենի բնակավայրի 7 փողոցներում խմելու ջրի կառուցում, Ռինդ բնակավայրում 50 խմ տարողությամբ ռեզերվուարի, երկու կապտաժների կառուցում և խմելու ջրի արտաքին ցանցի մասնակի վերանորոգում,
8. Արենի համայնքի Արենի բնակավայրի «Հին թաղ» թաղամասում ոռոգման ջրամատակարարման ցանցի կառուցում, Արենի բնակավայրի 7 փողոցներում ոռոգման ցանցի մասնակի հիմնանորոգում, Արփի բնակավայրի «Հոփիկներ» հանդամասի Տեռասներ կոչվող հատվածում ոռոգման ջրագծի կառուցում, Խաչիկ բնակավայրում ոռոգման ջրի ջրամբարի և ջրամբարը սնուցող արտաքին ցանցի կառուցում, Ռինդ բնակավայրում «Ավշար» հանդամասում ոռոգման ջրի 2կմ հատվածի կառուցում,
9. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում, սալվածքների կառուցում և համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերում:

Հաստատվել է 5 ծրագիր՝

- Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրում խմելու ջրի 1.3 կմ ներքին ցանցի կառուցում, Գնիշիկ բնակավայրում խմելու ջրի ներքին ցանցի կառուցում, Խաչիկ բնակավայրում «Մկնակտրեկ» ջրաղբյուրի արտաքին ցանցի կառուցում /89 201 175 ՀՀ դրամ/,
- Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում 3.0 կմ ներքին ցանցերի կառուցում, Չիվա բնակավայրի 1950 գծմ ոռոգման ներքին ցանցի մասնակի կառուցում /103 138 601 ՀՀ դրամ/,
- Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի կենտրոնական ճանապարհի ճանապարհամերձ տարածքում 450 գծմ ներքին ցանցի կառուցում, Արենի բնակավայրի «Տապ» հանդամասում 2.36 կմ ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում, Արենի բնակավայրի 1-ին փողոցում 500 գծմ ներքին ցանցի կառուցում, Գնիշիկ բնակավայրի ոռոգման ջրի 1 կմ երկարությամբ D=610մմ պոլիէթիլենային և պողպատե խողովակներով ջրագծի, ինչպես նաև ճանապարհի կառուցում, Ռինդ բնակավայրում ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում /172 306 331 ՀՀ դրամ/,
- Արենի համայնքի Արենի բնակավայրի 7 փողոցներում խմելու ջրի կառուցում, Ռինդ բնակավայրում 50 խմ տարողությամբ ռեզերվուարի, երկու կապտաժների կառուցում և խմելու ջրի արտաքին ցանցի մասնակի վերանորոգում /125 246 800 ՀՀ դրամ/,
- Արենի համայնքի Արենի բնակավայրի «Հին թաղ» թաղամասում ոռոգման ջրամատակարարման ցանցի կառուցում, Արենի բնակավայրի 7 փողոցներում ոռոգման

ցանցի մասնակի հիմնանորոգում, Արփի բնակավայրի «Հովիկներ» հանդամասի Տեռասներ կոչվող հատվածում ոռոգման ջրագծի կառուցում, Խաչիկ բնակավայրում ոռոգման ջրի ջրամբարի և ջրամբարը սնուցող արտաքին ցանցի կառուցում, Ռինդ բնակավայրում «Ավշար» հանդամասում ոռոգման ջրի 2կմ հատվածի կառուցում /561 530 680 ՀՀ դրամ/:

Վայք համայնք՝ 5 ծրագիր՝ 2 մլրդ 072 մլն ՀՀ դրամ արժողությամբ:

1. Վայք քաղաքի Ալավերդյան, Մելիքյան, 26 Կոմիսարների փողոցների և Ջերմուկի խճ. 1-ին նրբանցքի ասֆալտապատման աշխատանքներ,
2. Վայք համայնքի Գոմք և Ջառիթափ բնակավայրերի ոռոգման ցանցի կառուցում,
3. Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի Ալավերդյան, Մելիքյան և Կոմիսարների փողոցի լուսավորության ցանցի կառուցում,
4. Վայք քաղաքի շենքերի խաղահրապարակների, մայթերի կառուցման և Վայք քաղաքի շենքերի բակային հատվածների ասֆալտապատման, լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ,
5. Վայք համայնքի Ջառիթափ բնակավայրում խմելու ջրի ցանցի հիմնանորոգման աշխատանքներ:

Հաստատվել է 2 ծրագիր՝

- Վայք համայնքի Գոմք և Ջառիթափ բնակավայրերի ոռոգման ցանցի կառուցում /652 545 180 ՀՀ դրամ/,
- Վայք համայնքի Ջառիթափ բնակավայրում խմելու ջրի ցանցի հիմնանորոգման աշխատանքներ /158 394 200 ՀՀ դրամ/:

Ջերմուկ համայնք՝ 1 ծրագիր՝ 69 մլն ՀՀ դրամ արժողությամբ

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Քարագլուխ, Եղեգիս բնակավայրերում ՕԿՋ-ի կառուցում, Գողթանիկ բնակավայրում կապտաժի կառուցում, Հորբատեղ բնակավայրում խմելու ջրագծի վերանորոգում /հաստատվել է՝ 69 220 754 ՀՀ դրամ/:

Եղեգիս համայնք՝ 2 ծրագիր՝ 184 մլն ՀՀ դրամ արժողությամբ

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Քարագլուխ, Եղեգիս բնակավայրերում ՕԿՋ-ի կառուցում, Գողթանիկ բնակավայրում կապտաժի կառուցում, Հորբատեղ բնակավայրում խմելու ջրագծի վերանորոգում **/հաստատվել է՝ 74 116 690 ՀՀ դրամ/**,
2. ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ, Հորս, Աղնջաձոր, Արտաբույնք, Շատին, Սալլի բնակավայրերի ոռոգման առուների կառուցում:

Առաջարկվել է՝

1.Սուբվենցիոն ծրագրեր կազմելիս բազմակողմանի գնահատել դրանց անհրաժեշտությունը, հստակ սահմանել առաջնահերթությունները, բարձրացնել սուբվենցիոն ծրագրերի մասին հանրության լայն շրջանակների իրազեկվածության մակարդակը:

2.Սահմանել ընթացիկ վերահսկողություն սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների որակի, ժամկետների պահպանման ուղղությամբ:

3. Շարունակել հետևողական աշխատանքներ տանել մարզի զբոսաշրջային ոլորտի ներուժի զարգացման և ընդլայնման ուղղությամբ:

Օրակարգի 4-րդ հարցի շուրջ զեկուցեց Գեղամ Մարգարյանը՝ ներկայացնելով գյուղատնտեսության ոլորտում իրականացված աշխատանքները՝ ըստ ուղղությունների, ցուցանիշների, արդյունքների, ինչպես նաև Կառավարության կողմից տրամադրվող աջակցության տարբեր ծրագրերի ընթացքի վերաբերյալ տեղեկություն:

1. 2026 թվականին մարզում կատարված ցանքերը

Ընդամենը ցանքեր՝ 2896,4հա/207,44հա պակաս 2025թ համեմատ

որից՝ հացահատիկ և հատիկաընդեղեն - 1259,03/ 39.0հա պակաս
բանջար բոստանային մշակաբույսեր - 148,04հա/ 44,56հա պակաս
կարտոֆիլ - 63,6հա/ 1,6 հա պակաս
կերային մշակաբույսեր - 1404,52հա/ 4,68հա պակաս
տեխնիկական մշակաբույսեր - 17հա/ 7,1 հա ավելի

-2025 թ. աշնանը 2026 թվականի բերքի համար կատարվել է 393,79 հա աշնանացան ցորենի ցանք, որից 266.2 հեկտարը՝«Բուսաբուծության աջակցության ծրագրով», կառավարության կողմից սուբսիդավորվել է 21 296 320 ՀՀ դրամ գումար:

- 2026 թվականի գարնանացանի համար ՀՀ կառավարության 2026 թվականի մարտի 26-ի N 384 - Լ որոշմամբ **նույնպես հաստատվել է Բուսաբուծության աջակցության ծրագիրը,** որի նպատակն է ընդլայնել հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի ցանքատարածությունները:

Կառավարության կողմից ըստ մշակաբույսերի փոխհատուցումը կտրամադրվի հետևյալ սահմանաչափերով՝

-Աշնանացան ցորենի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 80 000 ՀՀ դրամ:
-Գարնանացան հացահատիկային մշակաբույսերի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 70 000 ՀՀ դրամ:
-Եգիպտացորենի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 85 000 ՀՀ դրամ:
-Հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 100 000 ՀՀ դրամ:
-Կերային մշակաբույսերից՝ առվույտի, կորնգանի 1 հեկտար մակերեսի մշակության հաշվով՝ 110 000 ՀՀ դրամ, իսկ կերի ճակնդեղի համար՝ 80 000 ՀՀ դրամ:

2.2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառված անասնագլխաքանակը և համեմատությունը 2025 թվականի հետ:

Խոշոր եղջերավոր կենդանիներ - 13538 գլ./ 2025թ 14011գլ., տարբ. -473 գլ.
որից կովեր - 5041 գլ./ 2025թ 5502գլ, տարբ. -461 գլ.
մանր եղջերավոր կենդանիներ - 15491 գլ. /2025թ 14604գլ, տարբ. +887 գլ.
խոզեր - 1921 գլ. /2025թ 1881գլ, տարբ. +40 գլ.
մեղվաընտանիքներ - 19706 փեթակ /2025թ 22461 փեթակ, տարբ. -2755փեթակ
թռչուններ - 44266 թև /2025թ 44473 թև, տարբ. -207 թև

3. Բույսերի պաշտպանություն.

Բույսերի պաշտպանության ծրագրով մարզին անվճար տրամադրվել է 12,8լ «Բրոդիֆան» մկնասպան թունանյութ, որը բաշխվել է մարզի Եղեգնաձոր և Արենի

համայնքներին՝ 160 հեկտար վարակված վարելահողերի վրա կրծողների դեմ քիմիական պայքար կազմակերպելու համար:
Տրամադրված թունանյութի արժեքը /փոխատուցված/ կազմել է՝ 52.0 հազար ՀՀ դրամ
Մարզին անվճար տրամադրվել է նաև 100 հատ Արևելյան՝ 50 հատ խնձորի պտղակեր վնասատուի և 60 հատ խաղողի պտղակեր վնասատուի ֆերոմոնային թակարդներ, որի արժեքը /փոխհատուցված/ կազմել է 399.0 հազար ՀՀ դրամ:

4. Վարչության անմիջական վերահսկողությամբ անասնաբուժական ծառայությունների կողմից պետ. պատվերով իրականացված անասնաբուժական ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումների քանակը

-բրուցելյոզ խեկ - 5479 գլ.
-բրուցելյազ մեկ - 9405 գլ.
-էմկար խեկ - 12379 գլ.
-սիբիրախտ խեկ - 17124 գլ.
-սիբիրախտ ձիերի - 665 գլ.
-դաբաղ խեկ - 17172 գլ.
-դաբաղ մեկ - 4250 գլ.
Աշխատանքներն ընթանում են՝ համաձայն ժամանակացույցի:

5. Գյուղատնտեսական մթերքների արտահանման հետ կապված խնդիրների պատճառով ՀՀ Կառավարությունը իրականացնում է երկու միջոցառում.

-Հայաստանի Հանրապետության տարածքից թարմ պտղի, շշալցված խաղողի գինու, բրենդի և հանքային ջրի արտահանման աջակցության միջոցառում: Միջոցառման նպատակը ՀՀ տարածքից արտահանվող թարմ պտղի, շշալցված խաղողի գինու, բրենդի և հանքային ջրի մրցունակության բարձրացումն է՝ արտահանված արտադրանքի համար փոխհատուցում տրամադրելու միջոցով: Միջոցառման շրջանակներում 2026 թվականի հունիսի 1-ից մինչև հուլիսի 1-ը թարմ պտղի, շշալցված խաղողի գինու, բրենդիի և հանքային ջրի արտահանում իրականացրած ՀՀ ռեզիդենտ համարվող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին կամ ֆիզիկական անձանց արտահանված արտադրանքի համար տրամադրվում է փոխհատուցում հետևյալ չափերով՝

-ծիրանի 1 կիլոգրամի համար 200 դրամ.
-սալորի, դեղձի և նեկտարինի յուրաքանչյուր 1 կիլոգրամի համար 250 դրամ.
-կեռասի յուրաքանչյուր 1 կիլոգրամի համար 400 դրամ.
-շշալցված խաղողի գինու յուրաքանչյուր 1 լիտրի համար 350 դրամ.
-շշալցված բրենդիի յուրաքանչյուր 1 բացարձակ լիտրի համար 830 դրամ.
-շշալցված հանքային ջրի յուրաքանչյուր 1 լիտրի համար 150 դրամ:

6.Հայաստանի Հանրապետության տարածքից ջերմատնային արտադրության թարմ պտուղբանջարեղենի և ծաղիկների արտահանման աջակցության միջոցառում

Նպատակը ՀՀ տարածքից արտահանվող ջերմատնային արտադրության ելակի, լոլիկի, պղպեղի և ծաղիկի մրցունակության բարձրացումն է՝ արտահանված արտադրանքի համար փոխհատուցում տրամադրելու միջոցով:Միջոցառման շրջանակներում 2026 թվականի հունիսի 1-ից մինչև հուլիսի 1-ը ելակի, լոլիկի, պղպեղի և ծաղիկի արտահանում իրականացրած ՀՀ ռեզիդենտ համարվող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին կամ ֆիզիկական անձանց արտահանված արտադրանքի համար տրամադրվում է փոխհատուցում հետևյալ չափերով՝

-ելակի յուրաքանչյուր 1 կիլոգրամի համար 770 ՀՀ դրամ,
-լոլիկի յուրաքանչյուր 1 կիլոգրամի համար 275 ՀՀ դրամ,
-պղպեղի յուրաքանչյուր 1 կիլոգրամի համար 400 ՀՀ դրամ,

-ծաղիկի յուրաքանչյուր 1 հատի համար 37 ՀՀ դրամ:

7.2026 թվականին կաթի արտադրության համար Կառավարությունը իրականացնում է սուբսիդավորման տրամադրման միջոցառում

Միջոցառման նպատակն է աջակցելու կովի անմշակ կաթի արտադրությանը Հայաստանի բոլոր մարզերում:

- Տրվում է միայն **3-րդ գլխից մինչև 22-րդ գլուխը ներառյալ**:
- Առավելագույնը հաշվարկվում է **20 կովի համար**:
- Յուրաքանչյուր կովի համար՝ **15,000 դրամ**:

8.Կառավարության կողմից իրականացվում է ՀՀ-ում պարարտանյութերի ձեռքբերման աջակցության ծրագիր: Ծրագրի նպատակն է ապահովել բուսաբուծության ճյուղում տնտեսավարողների կողմից գործունեություն իրականացնելու համար բավարար պայմաններ, մասնավորապես՝ ստեղծել հողօգտագործողների համար գնաճի պայմաններում շուկայական գներից ավելի ցածր գներով պարարտանյութերի ձեռքբերման հնարավորություն:

Ըստ համայնքների՝ ներկրվել է ազոտական և կոմբինացված /NPK/պարատանյութեր

Ջերմուկ համայնք	- 12.0 տ.ազոտական
ծրագրով	- 12.0 տ.ազոտական
Վայք համայնք	- 62.5 տ.ազոտական
շուկայական արժեք	– 60.0տ.ազոտական
որից ծրագրով	- 2.5 տ.ազոտական
Եղեգնաձոր համայնք	- 20.3 տ. ազոտական և կոմբինացված/NPK/
որից ծրագրով ազոտական	- 11.3 տ.
ծրագրով	- 9.0 տ. կոմբինացված / NPK/
Եղեգիս համայնք	- 14,3 տ.ազոտական
Արենի համայնք	- 137,5 տ.ազոտական և կոմբինացված
որից ծրագրով	- 114,6 տ.ազոտական
ծրագրով	- 22.9 տ.կոմբինացված /NPK/

Ընդամենը մարզ է ներկրվել ազոտական 214.7 տ. և կոմբինացավծ /NPK/ 31.9 տ. պարարտանյութեր:

9.<<Եղեգնաձոր>> Ջրօտագործողների ընկերության կողմից 2026թ.առաջին կիսամյակում /32.42 մլն ՀՀ դրամ/ ընկերության ֆինանսական միջոցներով կատարվել է.

-Ոռոգման ցանցերի մաքրում ձեռքով – 38.5 կմ, արժեքը կազմել է՝ 7.42 մլն ՀՀ դրամ

-Ոռոգման ցանցերի մաքրում մեխանիզմով – 27 կմ, արժեքը կազմել է՝ 6.2մլն ՀՀդրամ

-Ոռոգման ցանցերի նորոգում և ջրաչափական սարքերի /Սենդվիչ/ տեղադրում 26 հատ - 17.6 մլն ՀՀդրամ

-Պոմպակայանների նորոգում - 1.2 մլն ՀՀ դրամ:

10.Շրջակա միջավայրի պահպանություն

2026 թվականի առաջին կիսամյակում ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնի կողմից արձանագրվել է ձկնորսության և խեցգետնի ապօրինի որսի մեկական դեպք:2026 թվականի ապրիլ-հունիս ամիսներին արձանագրվել են մարդ-արջ կոնֆլիկտին, ինչպես նաև վայրի գիշատիչ կենդանիներից արջին /14/ և գայլին /1 /առնչվող դեպքեր: Գյուղացիական տնտեսություններին հասցված վնասը կազմում է 2703.0 հազ. ՀՀ դրամ:

Առաջարկվել է՝

1. Հնարավոր շահառուների շրջանակներում կազմակերպել գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության տարբեր ուղղություններով իրականացվող ծրագրերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

2. Հաշվի առնելով Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության համար նպաստավոր լինելու հանգամանքը՝ գործուն քայլեր մշակել ցուցանիշների բարելավման ուղղությամբ:

3. Գյուղատնտեսական աշխատանքների ակտիվ սեզոնով պայմանավորված՝ մշտական ուշադրության կենտրոնում պահել համայնքներում ոռոգման համակարգի աշխատանքները, ընթացիկ հարցերը՝ հնարավորինս ապահովելով ջրամատակարարման անհրաժեշտ ծավալներ:

Օրակարգի 5-րդ հարցի շուրջ ելույթ ունեցավ Սուրեն Միրզոյանը՝ ներկայացնելով բաժնի կողմից իրականացված աշխատանքների /այդ թվում նաև գաղտնիության ռեժիմի ապահովման ուղղությամբ իրականացված աշխատանքների/ հիմնական ուղղությունները:

2026 թվականի 1-ին կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի գործունեությունն իրականացվել է՝ ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, լիազոր պետական մարմինների հանձնարարականների և մարզպետի աշխատակազմի կանոնադրության համաձայն:

Բաժնի աշխատանքները նպատակաուղղված են եղել մարզի տարածքում զորահավաքային նախապատրաստության միջոցառումների համակարգմանը, համայնքների և պետական կառավարման տարածքային ստորաբաժանումների կողմից զորահավաքային պատրաստության ապահովմանը, համապատասխան փաստաթղթերի վարման, մշակման, արդիականացման, վերահսկողության, մեթոդական աջակցության իրականացմանը և գաղտնության ռեժիմի պահանջների ապահովմանը:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից իրականացվել են հետևյալ հիմնական աշխատանքները: Հիմնովին վերամշակվել, հաստատվել և գործողության մեջ են դրվել ՀՀ Վայոց ձորի մարզի քաղաքացիական պաշտպանության «Կապի», «Ինժեներական և կոմունալ-տեխնիկական», «Բույսերի և կենդանիների պաշտպանության», «Առևտրի և սննդի», «Նյութատեխնիկական մատակարարման», «Բժշկական», «Էներգետիկայի» և «Տրանսպորտի» ծառայությունների պլանները:

Միաժամանակ համայնքապետարանների պատասխանատու աշխատակիցներին ցուցաբերվել է մեթոդական աջակցություն համայնքային պլանների լրամշակման, հաշվառման, պահպանման և պարբերական թարմացման հարցերում: Լրամշակվել և ճշգրտվել են հատուկ ժամանակաշրջանում մարզպետի աշխատակազմի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը և համապատասխան փաստաթղթերը: Թարմացվել են պատասխանատու անձանց վերաբերյալ տվյալները:

Դեռևս մշակման փուլում է գտնվում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գաղտնիության ռեժիմի ապահովման ստորաբաժանման (ԳՌԱՍ) գաղտնի տեղեկակիրների տարհանման պլանը:Վերանայվել և թարմացվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում աշխատող զինապարտների գրանցամատյանը և պահեստազորայինների ցուցակները, որոնց օրինակները սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվել են ՀՀ ՊՆ ՀՋԿ Վայոց ձորի մարզի զինվորական կոմիսարիատ: Ապահովվել է աշխատակազմի զինապարտ աշխատողների մասնակցությունը պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացված վարժական հավաքներին:Աշխատանքներ են

իրականացվել մարզպետի աշխատակազմում աշխատող զինապարտ պաշտոնատար անձանց ամրագրման ուղղությամբ:

Ուշադրության կենտրոնում են եղել նաև համայնքապետարաններում ամրագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Նշված գործընթացում առկա խնդիրների և մտահոգությունների հետ կապված տեղի են ունեցել հանդիպում-քննարկումներ: Մարզային ղեկավարությունը հանդես է եկել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոնատար անձանց ամրագրման գործընթացը կանոնակարգող ՀՀ կառավարության 05.10.2020թ թիվ 1637-ՆԳ որոշման մեջ լրացում կատարելու նախաձեռնությամբ: Առաջարկվել է լիազոր մարմնին բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնը ներառել ամրագրման ենթակա պաշտոնների ցանկում՝ հաշվի առնելով նշված պաշտոնի համար սահմանված գործառույթների բնույթն ու կարևորությունը հատկապես զորահավաքային նախապատրաստության բնագավառում:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավական և մասնագիտական հսկողության շրջանակներում ուսումնասիրվել է Եղեգնաձորի համայնքապետարանի գործունեությունը պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում:

Մասնավորապես ստուգվել են՝

1. Համայնքի զորահավաքային, քաղաքացիական պաշտպանության և ՔՊ ծառայությունների պլանների առկայությունը և դրանց համապատասխանությունը գործող իրավական ակտերին:
2. Զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանի և աշխատող պահեստազորայինների ցուցակների առկայությունն ու վարման վիճակը:
3. Համայնքապետարանի ղեկավար կազմի աշխատակիցների ամրագրման ուղղությամբ տարվող աշխատանքները:
4. Պահեստազորային պատրաստականության շրջանակներում վարժական հավաքներին ներգրավված անձանց ծանուցման ուղղությամբ իրականացվող աշխատանքների վիճակը:
5. Արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության ժամանակ համայնքապետարանի գործունեության շարունակականությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողների ուսուցման՝ մասնավորապես պարապմունքների, շտաբային և հրամանատարաշտաբային ուսումնավարժանքների պլանավորման ու անցկացման պրակտիկան:
6. Աշխատակազմի ազդարարման և հավաքի կազմակերպման պատրաստվածությունը:
7. Համայնքի ղեկավարի կառավարման պահեստային կետի, համայնքի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների ընդհանուր պայմանները, սանիտարահիգենիկ վիճակը և համալրվածությունն անհրաժեշտ գույքով ու պարագաներով:

Ուսումնասիրությունների արդյունքներով համայնքապետարանի կողմից իրականացված աշխատանքներն ընդհանուր առմամբ գնահատվել են բավարար:

Համայնքապետարանի զորահավաքային նախապատրաստության բնագավառում գործառույթներ իրականացնող պատասխանատու աշխատողներին ցույց է տրվել անհրաժեշտ մեթոդական աջակցություն, ինչպես նաև ներկայացվել են

առաջարկություններ նշված ոլորտում հետագա աշխատանքները բարելավելու և առավել արդյունավետ կազմակերպելու համար:

Կիսամյակի ընթացքում ղեկավարվելով ՀՀ պաշտպանության մասին օրենքի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 10-ի № 1444-ՆՀԳ որոշման պահանջներով՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ անց է կացվել առանձնացված շտաբային ուսումնավարժանք՝ «ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի փոխադրումը ուժեղացված աշխատանքային ռեժիմի, կառուցվածքային ստորաբաժանումների գործողությունները հանկարծակի ծագած խնդիրների լուծման ընթացքում» թեմայով:

Ուսումնավարժանքի ընթացքում կիրառության մեջ են դրվել մարզպետի աշխատակազմի աշխատանքային ռեժիմների փոխադրման ներքին և մարզի ՔՊ ծառայությունների պլանները:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումները մասնակցություն են ունեցել նաև ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության կողմից 2026թ մայիսի 14-ին «Հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը անտառային հրդեհների առաջացման ժամանակ» թեմայով անցկացված ուսումնավարժանքին:Ուսումնավարժանքի նախապատրաստական և անցկացման փուլերում ՀՀ Վայոց ձորի մարզի ՔՊ ծառայություններին ցույց է տրվել համակողմանի մեթոդական աջակցություն, մշակվել և ուսումնավարժանքի ընթացքում գործածության մեջ են դրվել անհրաժեշտ փաստաթղթերը:

Քննարկվող ժամանակահատվածում ՀՀ ՊՆ, Վայքի համայնքապետարանի և մարզային շահագրգիռ մարմինների հետ համատեղ, զորահավաքային նախապատրաստության շրջանակներում ուսումնասիրվել են Վայք համայնքի Զառիթափ, Գոմք, Խնձորուտ, Սերս և Բարձրունի բնակավայրերի տարածքներում գտնվող օպերատիվ սարքավորումները:Պարտադիր զինվորական ծառայության 2025թ. ձմեռային զորակոչի, ինչպես նաև պահեստազորային պատրաստության շրջանակներում համագործակցված աշխատանքներ են իրականացվել ինչպես ՀՀ ՊՆ ՀԶԿ Վայոց ձորի մարզի զինկոմիսարիատի, այնպես էլ համայնքապետարանների հետ: Տեղի են ունեցել քննարկումներ, գործնական հանդիպումներ և ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ նշված բնագավառում աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:

Ուսումնասիրվել են ՀՀ Վայոց ձորի մարզի այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրերը և հավաքագրված տեղեկությունները տրամադրվել են լիազոր մարմնին:

Ձմեռային զորակոչի ընթացքում ՀՀ ՊՆ ՀԶԿ Վայոց ձորի մարզի զինկոմիսարիատից ստացվել են պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման և ազատման իրավունքից օգտվող քաղաքացիների վերաբերյալ 33 գործեր, որոնք ուսումնասիրվել են ՀՀ Վայոց ձորի մարզի զորակոչային հանձնաժողովի կողմից և ընդունվել են համապատասխան եզրակացություններ,համաձայն որոնց՝ 2025թ ձմեռային զորակոչից տարկետման իրավունքից օգտվել է 32 քաղաքացի, իսկ ազատման իրավունքից 1 քաղաքացի:

Գաղտնիության ռեժիմի ապահովման ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ.

2026 թվականի 1-ին կիսամյակում զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից որոշակի աշխատանքներ են իրականացվել գաղտնիության ռեժիմի ապահովման ուղղությամբ:

Նշված ժամանակահատվածում գաղտնիության ռեժիմի ապահովման ստորաբաժանումը գործունեությունը իրականացրել է ՀՀ օրենսդրության, պետական գաղտնիքի պաշտպանությանն ուղղված իրավական ակտերի պահանջներին համապատասխան՝ ապահովելով պետական գաղտնիքի պահպանման, գաղտնիության ռեժիմի կիրառման և վերահսկման անհրաժեշտ մակարդակ՝ մասնավորապես.

Ապահովել է գաղտնի տեղեկություններ պարունակող փաստաթղթերի հաշվառման, պահպանման, օգտագործման, փոխանցման, ոչնչացման և արխիվացման աշխատանքները:

Մարզպետի աշխատակազմում, համայնքապետարաններում նոր ընդունված աշխատողների հետ տարվել են անհրաժեշտ տեղեկատվական և բացատրական աշխատանքներ պաշտոնեական պարտականությունների կատարմամբ պայմանավորված գաղտնի տեղեկությունների հետ առնչվելու կարգի, ինչպես նաև գաղտնության ռեժիմի խախտումների համար օրենքով նախատեսված պատասխանատվության վերաբերյալ:

Սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստվել ու լիազոր մարմնին են տրամադրվել գաղտիության աստիճանի թույլտվության ձևակերպման համար պահանջվող փաստաթղթերը:

Իրականացվել են գաղտնիության ռեժիմի պահպանմանն ուղղված մշտադիտարկումներ՝ մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և համայնքապետարանների նկատմամբ՝ հնարավոր խախտումների կանխարգելման և ժամանակին արձագանքման նպատակով:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժինը գաղտնիության ռեժիմի ապահովման բնագավառում սերտորեն համագործակցել է համայնքապետարանների գաղտնիության ռեժիմի ապահովման աշխատանքները համակարգող պատասխանատու պաշտոնատար անձանց հետ:

Կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ: Գաղտնիության ռեժիմի ապահովման, ծառայողական տեղեկատվության դասակարգման, փաստաթղթաշրջանառության ճիշտ կազմակերպման հարցերով ցույց է տրվել մեթոդական աջակցություն: Սահմանված կարգով բազմացվել և տրամադրվել են գաղտնիության ռեժիմի ապահովման աշխատանքները կանոնակարգող իրավական ակտերի օրինակներ:Ներկայացվել են պարզաբանումներ, ինչպես նաև տրվել են բանավոր խորհրդատվություններ՝ կոնկրետ իրավիճակներից բխող խնդիրների լուծման նպատակով:

Ուսումնասիրվել են գաղտնիության ռեժիմի ապահովման ոլորտում կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնց վերաբերյալ համապատասխան տեղեկություններ են տրամադրվել համայնքապետարանի պատասխանատու աշխատողներին: Համագործակցությունը ՏԻՄ-երի հետ նպաստել է գաղտնիության ռեժիմի ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքների բարելավմանը և իրավական ակտերի պահանջների միատեսակ կիրառմանը:

2026 թվականի 1-ին կիսամյակում բաժնի կողմից նախատեսված կազմակերպչական, վերահսկողական և մեթոդական աշխատանքների գերակշիռ մասը կատարվել են, որոնց շնորհիվ ապահովվել է զորահավաքային նախապատրաստության գործընթացների շարունակական իրականացումը: Իրականացված միջոցառումները մասնավորապես

նպաստել են ինչպես մարզպետի աշխատակազմի, այնպես էլ համայնքապետարանների զորահավաքային պատրաստության մակարդակի պահպանմանը, համապատասխան փաստաթղթերի մշակմանը, արդիականացմանը, ոլորտային համագործակցության ակտիվացմանը և գործող օրենսդրության պահանջների կատարմանը:

2026 թվականի 2-րդ կիսամյակում բաժնի առաջնահերթ խնդիրներն են լինելու զորահավաքային նախապատրաստության միջոցառումների արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանների հետ մեթոդական աշխատանքների շարունակականությունը, նախատեսված ժամկետներում պլանների և զորահավաքային փաստաթղթերի արդիականացումը, վերահսկողական միջոցառումների ընդլայնումը, գաղտնիության ռեժիմի պատշաճ ապահովումը և շահագրգիռ մարմինների հետ համագործակցության ամրապնդումը:

Առաջարկվել է՝

1.Սերտորեն համագործակցել համայնքապետարանների զորահավաքային նախապատրաստության բնագավառում գործառույթներ իրականացնող պատասխանատու աշխատողների հետ ոլորտի հետագա աշխատանքները բարելավելու և առավել արդյունավետ կազմակերպելու համար:

2.Պահպանել ակտիվ համագործակցությունը ՏԻՄ-երի հետ գաղտնիության ռեժիմի ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքների բարելավման և իրավական ակտերի պահանջների միատեսակ կիրառման նպատակով:

Օրակարգի վերջին հարցին անդրադարձավ Գվիդոն Դավթյանը՝ ներկայացնելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության կողմից 2026 թվականի առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների ընդհանուր պատկերը:

2026 թվականի առաջին կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզին պլանավորվել է հատկացնել **2 միլիարդ 303 միլիոն 999 հազար 600 ՀՀ դրամ, հատկացվել է 2 միլիարդ 260 միլիոն 29 հազար ՀՀ դրամ,** կատարողականը կազմում է **98.1%,** այդ թվում՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերի համար նախատեսվել է **181 միլիոն 102 հազար 600 ՀՀ դրամ, հատկացվել է 169 միլիոն 824 հազար 880 ՀՀ դրամ, կատարողականը՝ 96.37%:**

2.ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ծրագրերով նախատեսվել է **270 միլիոն 549 հազար 900 ՀՀ դրամ, փաստացի հատկացվել է 260 միլիոն 687 հազար 580 ՀՀ դրամ, կատարողականը՝ 96.35%, այդ թվում**

- 1049 ծրագրի 11002 միջոցառում՝ **մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ,** պլանավորվել է **99 միլիոն 290 հազար ՀՀ դրամ** և ամբողջությամբ ֆինանսավորվել է **(ճանապարհների ձմեռային և ամառային ընթացիկ պահպանության ծախսեր):**

- 1049 ծրագրի 21001 միջոցառում՝ **տեղական նշանակության ավտոճանապարհների ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում,** պլանավորվել է **1 միլիոն 599 հազար 600 ՀՀ դրամ** և ամբողջությամբ ֆինանսավորվել է: Միջոցառման շրջանակներում ձեռք է բերվել ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Չիվա բնակավայրի դպրոց տանող ճանապարհների

հիմնանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերը:

- 1212 ծրագրի 12003 միջոցառում՝ **պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին,** պլանավորվել է **43 միլիոն ՀՀ դրամ** և ամբողջությամբ ֆինանսավորվել է: Միջոցառման շրջանակներում էլեկտրաէներգիայի, անշարժ գույքի հարկի և ոռոգման ջրի վճարների մասով փոխհատուցում են ստացել Արենի և Վայք համայնքների սահմանամերձ բնակավայրերի բնակիչները, այդ թվում էլեկտրոէներգիա՝ 1356 շահառու, անշարժ գույքի հարկ՝ 1371 շահառու, ոռոգման ջուր՝ 448 շահառու:

- 1212 ծրագրի 12007 միջոցառում՝ **ՀՀ մարզերին սուբվենցիայի տրամադրում ենթակառուցվածքների զարգացման նպատակով:** Պլանավորվել է **58 միլիոն 549 հազար ՀՀ դրամ, փոխանցվել 58 միլիոն 485 հազար 870 ՀՀ դրամ** (ՀՀ կառավարության 2026 թվականի փետրվարի 19-ի թիվ 182-Ն և մարտի 19-ի թիվ 293-Ն որոշումներով Եղեգնաձոր և Արենի համայնքներին տրամադրված սուբվենցիայի գումարներ):

- 1212 ծրագրի 32001 միջոցառում՝ **ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի վարչական շենքի վերանորոգում:** Պլանավորվել է հատկացնել **26 միլիոն 129 հազար 600 ՀՀ դրամ,** հատկացվել է **16 միլիոն 672 հազար 870 ՀՀ դրամ:**

3.ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ծրագրերով նախատեսվել է **1 միլիարդ 812 միլիոն 987 հազար 100 ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 1 միլիարդ 795 միլիոն 974 հազար 330 ՀՀ դրամ, կատարողականը՝ 99.06%:**

4.ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծրագրերով նախատեսվել է **39 միլիոն 360 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 33 միլիոն 542 հազար 210 ՀՀ դրամ, կատարողականը՝ 85.22%:**

2026 թվականի առաջին կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզի 5 համայնքներին տրամադրված դոտացիաների ընդհանուր գումարը կազմում է **1 միլիարդ 311 միլիոն 66 հազար 200 ՀՀ դրամ:**

2026 թվականի առաջին կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզի 5 համայնքների ընդամենը եկամուտներ նախատեսվել են **2 միլիարդ 58 միլիոն 66 հազար 900 ՀՀ դրամ,** փաստացի հավաքագրվել են **2 միլիարդ 4 միլիոն 455 հազար 600 ՀՀ դրամ, կատարողականը՝ 97.4%, որից սեփական եկամուտները նախատեսվել են 667 միլիոն 418 հազար 100 ՀՀ դրամ,** փաստացի հավաքագրվել են **605 միլիոն 257 հազար 300 ՀՀ դրամ, կատարողականը՝ 90.7%:**

2026 թվականի առաջին կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության կողմից կազմակերպված գնումների արդյունքում՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով «Մավշին» ՍՊԸ-ի հետ կնքվել է ՎԶՄ-ԳՀԱՇՁԲ-02/26 պայմանագիր՝ 45,000,000 ՀՀ դրամ գումարով: Տեխնիկական հսկողությունն իրականացնում է «Պռոշաբերդշին» ՍՊԸ-ն, որի հետ կնքված ՎԶՄ-ՄԱՇՁԲ-17/26 պայմանագրի գինը կազմում է 850,000 ՀՀ դրամ, հեղինակային հսկողությունը՝ «Գլոբալ Փարթներս Գրուպ» ՍՊԸ-ն, պայմանագրի գինը կազմում է 279,602 ՀՀ դրամ:

2. ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով

«Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի հետ կնքվել է ՎԶՄ-ՀԲՄԱԾՁԲ-10/26 պայմանագիր՝ 180,000,000 ՀՀ դրամ գումարով: Շինարարության ընթացքի վերահսկման ծառայությունն իրականացնում է «Գլոբալ Փարթներս Գրուպ» ՍՊԸ-ն, որի հետ կնքված ՎԶՄ-ՄԱԾՁԲ-30/26 պայմանագրի գինը կազմում է 3,617,735 ՀՀ դրամ:

3. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայքի թիվ 1 մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով «Սատանի Կամուրջ» ՍՊԸ, «123» ՍՊԸ կոնսորցիումի հետ կնքվել է ՎԶՄ-ՀԲՄԱԾՁԲ-27/26 պայմանագիր՝ 138,894,444 ՀՀ դրամ գումարով: Շինարարության ընթացքի վերահսկման ծառայությունն իրականացնում է «Գլոբալ Փարթներս Գրուպ» ՍՊԸ-ն, որի հետ կնքված ՎԶՄ-ՄԱԾՁԲ-33/26 պայմանագրի գինը կազմում է 3,086,765 ՀՀ դրամ:

4. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայքի թիվ 3 մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով «Արման և Վահե Կոստանյաններ» ՍՊԸ, «ԲԼԵՍԿ» ՍՊԸ կոնսորցիումի հետ կնքվել է ՎԶՄ-ՀԲՄԱԾՁԲ-23/26 պայմանագիր՝ 259,425,000 ՀՀ դրամ գումարով: Շինարարության ընթացքի վերահսկման ծառայությունն իրականացնում է «Գլոբալ Փարթներս Գրուպ» ՍՊԸ-ն, որի հետ կնքված ՎԶՄ-ՄԱԾՁԲ-32/26 պայմանագրի գինը կազմում է 5,764,748 ՀՀ դրամ:

5. ՀՀ Վայոց ձորի մարզի S-9-7-/Մ-2/-Մոզրով-/S-9-40/ ճանապարհի վրա գտնվող կամրջի վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով «ԱՏ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի հետ կնքվել է ՎԶՄ-ՀԲՄԱԾՁԲ-37/26 պայմանագիրը՝ 71,400,240 ՀՀ դրամ գումարով: Տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է մրցույթ:

6. ՀՀ Վայոց ձորի մարզի S-9-36-/Մ-2/-Արտավան ճանապարհի վրա գտնվող հին կամրջի քանդման և նոր կամրջի կառուցման աշխատանքների իրականացման նպատակով հայտարարված ՎԶՄ-ՀԲՄԱԾՁԲ-39/26 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի արդյունքում նվազագույն գին առաջարկել է «Երվադա» ՍՊԸ և «Էլլաշին» ՍՊԸ կոնսորցիումը՝ 126,600,000 ՀՀ դրամ: Տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է մրցույթ:

7. ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքից դեպի Կարմրաշենի «Ալպյան» մարգագետիններ տանող գրունտային ճանապարհի կառուցման աշխատանքների իրականացման նպատակով հայտարարված ՎԶՄ-ԲՄԱԾՁԲ-35/26 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքում նվազագույն գին առաջարկել է «ԱԾԿԱՐ» ՍՊԸ-ն՝ 211,371,000 ՀՀ դրամ: Տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է մրցույթ:

8. ՀՀ Վայոց ձորի մարզի S-9-34,/Մ-2/-Չիվա-Ռինդ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ0+865, S-9-34,/Մ-2/-Չիվա-Ռինդ տեղական նշանակության ավտոճանապարհից դեպի նոր կառուցվող դպրոց մոտեցնող իջատեղի և S-9-9, S-9-34(Չիվա)-S-9-33(Ելփին) տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ0+355 հատվածների հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով հայտարարված ՎԶՄ-ՀԲՄԱԾՁԲ-38/26 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի արդյունքում նվազագույն գին առաջարկել է «Քարավան 11» ՍՊԸ-ն՝ 297,000,000 ՀՀ դրամ: Տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է մրցույթ:

9. ՀՀ Վայոց ձորի մարզի զոհված, հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության սահմանափակման աստիճան ունեցող զինծառայողների, աշխարհազորայինների, ծնողազուրկ, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ու անապահովության 0-ից բարձր միավոր ունեցող, կամ

անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված և ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգով անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 185 տոկոսի արժեքից ցածր եկամուտ ունեցող ընտանիքների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ընտանիքների 7-13 տարեկան դպրոցահասակ երեխաների տեղափոխությունը մանկական առողջարանական ճամբարներ պատշաճ կերպով իրականացնելու համար տրանսպորտային փոխադրումների ծառայությունների իրականացման համար ԱՁ Մարտին Համբարձումյանի հետ կնքվել է ՎՁՄ-ԷԱՃԾՁԲ-36/26 պայմանագիր՝ 976,000 ՀՀ դրամ գումարով:

Առաջարկվել է՝

1.Պարբերաբար համայնքապետարանների պատասխանատուների հետ քննարկել սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի հետ կապված հարցերը, վեր հանել խնդիրները:

2.Գնումների գործընթացները կազմակերպելիս խստորեն պահպանել օրենսդրության և համապատասխան ընթացակարգերի պահանջները:

Զեկույցներից հետո ծավալվել է հարց ու պատասխան, տրվել են պարզաբանումներ, հնչել են առաջարկներ: ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների և ՀՀ Վայոց ձորի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման աշխատանքների կազմակերպման մասին հայտարարություններիով հանդես եկավ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետի տեղակալ Գրիգոր Բաբաջանյանը:

Ամփոփելով ՀՀ Վայոց ձորի մարզի խորհրդի 2026 թվականի երկրորդ նիստը՝ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Վասիլ Ասլանյանը նշել է , որ կատարվել և կատարվում են մեծ ծավալի աշխատանքներ տարբեր ոլորտներում, կարևորել է դրանց շարունակականության ապահովման և բարելավման, առկա խնդիրներին համապատեղ և կառուցողական լուծումներ տալու, համայնքների ու մարզպետի աշխատակազմի միջև կառուցողական համագործակցության հարցերը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ՝ **Վասիլ Ասլանյան**